CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Հուլիսի 8, 2024

Դսեղում գործարկվում է ժամանակակից պահանջներին համապատասխան նոր առողջության կենտրոն

ԼՈՌԻ — Հուլիսի 15-ին Լոռու մարզի Դսեղ գյուղում տեղի կունենա «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից կառուցված առողջության կենտրոնի շենքի բացման պաշտոնական արարողությունը:

Միջոցառմանը ներկա կլինեն ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը, կառավարության և համայնքի այլ ներկայացուցիչներ, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

Դսեղի առողջության կենտրոնը ունի ժամանակակից լաբորատորիա, հարմարավետ խորհրդատվական և շտապ բուժօգնության սենյակներ, սպասասրահ, ինչպես նաև ատամնաբուժական առանձին մասնաշենք: Այն նախատեսում է սպասարկել գյուղական 7 համայնքի *(Դսեղ, Աթան, Լորուտ, Մարց, Ահնիձոր, Չկալով, Ծամուտ)* շուրջ 4,000 բնակչի:

Կարևոր է այն, որ այս նախաձեռնությունը միայն ՔՈԱՖ-ի կողմից նոր շենքի կառուցում չէ: ՔՈԱՖ-ը Դսեղի առողջության կենտրոնում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ իրականացնելու է առողջության առաջնային օղակի բարեփոխման պիլոտային ծրագիր, որի նպատակն է գյուղական համայնքների բնակչության համար ապահովել բարձրորակ, ծախսարդյունավետ առաջնային բուժօգնություն, բարելավել բնակչության առողջության արդյունքները, ստեղծել Հայաստանում գյուղական առողջապահական ծառայության կայուն և վերարտադրելի մոդել:

Բացման արարողության օրակարգը՝ ստորև.

CHILDREN
OF ARMENIA
FUND

ՕՐԱԿԱՐԳ

11:50 - 12:00 | Հյուրերի ժամանում

12:00 - 12:20 | Բացման խոսք

- **Լիանա Ղալթաղչյան**, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն
- **Տիգրան Խաչատրյան**, ՀՀ փոխվարչապետ *(ենթակա է հաստատման)*
- **Անահիտ Ավանեսյան**, ՀՀ առողջապահության նախարար
- **Արամ Ղազարյան**, ՀՀ Լոռու մարզպետ

12:20 - 12:40 | Շրջայց առողջության կենտրոնում

12:40 | Հյուրասիրություն

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին
«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723